# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 170-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՎԵՏԻՔ ՌՈՒԲԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ,ՑՈՂԻԿ ԹԵՎՈՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՔԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.147 ՀԱ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Ավետիք Գասպարյանի դիմումը, ***որոշում եմ***՝

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ավետիք Ռուբենի Գասպարյանին, Ցողիկ Թորոսի Գևորգյանին և Աննա Ավետիքի Գասպարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,144հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0108-0014, հողատեսքը՝ ջրովի վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 171-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 26-Ը ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 19 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ և 124-րդ կետերը, Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Արա Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի ղեկավարի կողմից 26 հուլիսի 2021 թվականին Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Արա Ասատրյանին տրամադրված թիվ 19 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել մեկ տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 172-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՎԵՏԻՔ ՌՈՒԲԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ,ՅՈՂԻԿ ԹԵՎՈՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՔ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1688 ՀԱ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Ավետիք Գասպարյանի դիմումը՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ավետիք Ռուբենի Գասպարյանին, Յողիկ Թորոսի Գևորգյանին և Աննա Ավետիքի Գասպարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,1688 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0126-0008, հողատեսքը՝ կորիզավոր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 173-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.21801ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն որոշումները Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածը՝ ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.21801հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0005-0015, գործառնական նշանակությունը այլ հողատեսք) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման:
2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.21801հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0005-0015, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:
3. Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի, 36-րդ, փողոց, 22/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 174-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.23525ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0,23525 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0110-0018, հողատեսքը՝ վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 175-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 100 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2021 թվականի «Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վաղարշակ Գարեգինի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2.33085հա հողամասից առանձնացված 0.0112հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու, նշված հողամասի վրա բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով շինարարության թույլտվություն տալու և հասցեավորելու մասին» թիվ 100 որոշման 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ.

*Վերը նշված հողամասի հասցեն թողնել համայնքի ղեկավարի 15.02.2021թվականի թիվ 034 որոշմամբ գրամադրված հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի Երևանյան խճուղի 9-րդ փակուղի, թիվ 9:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 176-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը, Հովիկ Կնյազի Սմբատյանի դիմումը, ***որոշում եմ***՝

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի 1-ին փողոց, թիվ 2 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-025-0010-0005, հողամասի չափը՝ 0.336 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Հովիկ Կնյազի Սմբատյանին և Վարդուհի Սիրեկանի Խաչատրյանին համասեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված կիսակառույց բնակելի տունը՝ 99.05քմ. ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2023QYNFTG:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Հովիկ Սմբատյանին և Վարդուհի Խաչատրյանին վճարելու 1 քմ.՝ 456 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված կիսակառույց բնակելի տան համար՝ ընդամենը 45 167 (քառասունհինգ հազար մեկ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

4. Կառուցապատող Հովիկ Սմբատյանին և Վարդուհի Խաչատրյանին սահմանված կարգով տրամադրել նախագծման թույլտվություն, որի հերթական համարն է 27:
5. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105082:
6. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
7. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 177-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 21-Ը ՀՈՒԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 32 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ և 124-րդ կետերը և «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի տնօրեն Հ.Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ՝***

1.Արենի համայնքի ղեկավարի կողմից 21 հուլիսի 2022 թվականին Արենի համայնքի Արենի բնակավայրում գինու արտադրամասի կառուցման համար «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ին տրամադրված թիվ 32 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել չորս ամիս ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 178-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՋԻՎԱՆ ՍՏԵՓԱՆԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1.1ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, որոշում եմ.

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ջիվան Ստեփանի Ալավերդյանի սեփականություն հանդիսացող 1.1 հա (ծածկագիրը՝ 10-006-0056-0001, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) արդյունաբերական նշանակության հողամասին և անասնաշենքին տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, Աղավնաձոր բնակավայր 15-ին փողոց, թիվ 5:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 179-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 16-րդհոդվածով, <<Տեղականինքնակառավարմանմասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 29-րդ կետի և 41-րդ հոդվածի պահանջներով՝ որոշում եմ.

1. Ստեղծել համայնքային արագ արձագանքման թիմ (այսուհետ՝ ԱԱԹ):
2. Հաստատել ԱԱԹ-ի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել ԱԱԹ-ի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Լիազորել ԱԱԹ-ին.
   1) ապահովելու համագործակցության նպաստավորմիջավայրՔովիդ-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների բռնկումների կառավարման, ինչպես նաև հանրային առողջապահության տեսանկյունից ռիսկերի նվազեցման խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կառույցների համար,
   2) ներկայացնելու վարակիչ հիվանդությունների բռնկումների կառավարման և հանրային առողջապահության հետ կապված համայնքային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմում, մասնակցային եղանակով որոշելու լուծման ճանապարհները և հետամուտ լինելու դրանց իրականացմանը,
   3) նպաստելու և օժանդակելու վարակիչ հիվանդությունների բռնկումների կառավարմանն ու հանրային առողջապահությանն ուղղված նախաձեռնությունների ու ծրագրերի իրականացմանը համայնքային մակարդակներում:
5. Գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզի
Արենի համայնքի ղեկավարի
2023թ. Հուլիսի 24 -ի N 179-Ա որոշման

# ԿԱԶՄ
# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄԻ

Թիմի ղեկավար՝ Լիլիա Կարապետյան _ *ՀՀ Վայոց ձոր մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ,*

Թիմի ղեկավարի տեղակալ՝ Դավիթ Մարտիրոսյան _ *համայնքապետարանի առաջատար մասնագետ*

Թիմի անդամներ՝

1. Մարգարիտ Սաֆարյան _ Ելփինի մ/դ ուսուցչուհի
2. Հրաձին Գևորգյան _ Չիվայի մ/դ դասվար
3. Հայկանուշ Խաչատրյան _ Չիվայի մ/դ ուսուցչուհի
4. Խաչիկ Խաչատրյան _ Ռինդի մ/դ զինղեկ
5. Նեկտար Մարտիրոսյան _ Արփիի բուժկետի բուժքույր
6. Հերմինե Վարդանյան _ Արփիի մանկապարտեզի բուժքույր
7. Տաթև Գրիգորյան _ Արփիի մ/պ դաստիարակ
8. Փափազ Հովհաննիսյան _ Արփիի մ/դ զինղեկ, Ելփինի բնակիչ
9. Հերմինե Մանգասարյան _ Արենիի բնակչուհի
10. Մանուշակ Սարգսյան _ <<Արենիի>> ԱԱՊԿ աշխատակից
11. Նարինե Միքաելյան _ <<Արենիի>> ԱԱՊԿ բուժքուր
12. Փառանձեմ Հակոբյան _Ագարակաձորի բուժկետի բուժքույր
13. Ռիտա Խուդավերդյան _ Ագարակաձորի մ/պ դաստիարակ
14. Թերեզա Մոսիկյան _ Ագարակաձորի մ/պ դաստիարակ
15. Հասմիկ Մարտիրոսյան _ Ագարակաձորի բուժկետի բուժքույր
16. Գայանե Աբրահամյան _ Արփիի բուժկետի բուժքույր
17. Աշխեն Մաթևոսյան _ <<Աղավնաձոր>> ԱԱՊԿ բուժքույր
18. Արսեն Շահինյան _ Աղավնաձորի մ/դ ուսուցիչ
19. Մարինե Գրիգորյան _ Աղավնաձորի մ/դ ուսուցչի օգնական
20. Շահանդուխտ Թովմասյան _ <<Աղավնաձոր>> բուժկետի բուժքույր
21. Գայանե Ղազարյան _ <<Աղավնաձոր>> բուժքույր
22. Գարիկ Կարապետյան _ Խաչիկ բնակավայրի հրշեջ մեքենայի վարորդ
23. Լիպարիտ Կարապետյան _ Արենի ՀՈԱԿ-ի աշխատակից, Չիվա բնակավայր
24. Հայկ Ստեփանյան _ Արենի բնակավայր , գործարար

Հավելված 2
ՀՀ Վայոց ձորի մարզի
Արենի համայնքի ղեկավարի
2023թ. Հուլիսի 24 -ի N 179-Ա որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄԻ

## I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համայնքային արագ արձագանքման թիմը (այսուհետ՝ ԱԱԹ) հանդիսանում է ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի խոշորացված համայնքում Քովիդ-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների բռնկումների կառավարման, ինչպես նաև հանրային առողջապահության տեսանկյունից ռիսկերի նվազեցման համակարգող մարմին:
2. ԱԱԹ-ում ներգրավված անձինք դառնալու են կամավորներ՝ ծառայելու համայնքի ընդհանուր շահերին:
3. ԱԱԹ-ն հաշվետու է համայնքի ղեկավարին և ավագանուն:
4. Թիմն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ավագանու որոշումներով, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:
5. Անհրաժեշտության դեպքում թիմի աշխատանքներին կարող են ներգրավվել ՀՀ գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների մասնագետներ և փորձագետներ:

## II ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

6. ԱԱԹ-ի գործառույթներն են.

1)Հանրային առողջապահության համար մտահոգություն առաջացնող իրավիճակների (Քովիդ-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների) հանդեպ համայնքի պատրաստվածության բարձրացում:

2) Հանրային առողջապահության համար մտահոգություն առաջացնող իրավիճակների հետ կապված կարիքների ու ռիսկերի գնահատում և Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) պլանի մշակում, փոփոխությունների առաջադրում:

3)ԱՌԿ պլանի վերանայում և թարմացում տարեկան առնվազն մեկ անգամ:

4) Քովիդ-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների սցենարներով վարժանքների իրականացում համայնքում և առանձին հաստատություններում:

5)Հանրային առողջապահության համար մտահոգություն առաջացնող իրավիճակների հետ կապված առկա ծառայությունների և ռեսուրսների գնահատում և քարտեզագրում:

6)Համայնքի զարգացման ծրագրում ներառելու նպատակով հանրային առողջապահության վիճակի բարելավման ուղղությամբ առաջարկությունների մշակում և ներկայացում համայնքի ավագանուն:

7) ԱԱԹ-ի պարբերաբար հանդիպումների կազմակերպում, ներգրավվելով թիմի բոլոր անդամներին:

8) Արտակարգ իրավիճակների արձանագրման դեպքում իրավիճակի վերլուծություն և գնահատում՝ համագործակցելով մասնագիտացված կառույցների հետ:

9) Բռնկումների և համաճարակների գործոնով պայմանավորված զանգվածային երևույթների բացահայտման գործընթացները բարելավելու, կարողությունների զարգացման նպատակով ԱՆ Վարակիչ հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոնին առաջարկությունների ներկայացում:

10)Հանրային առողջապահության համար մտահոգություն առաջացնող իրավիճակների հետ կապված պարբերաբար տեղեկատվության տրամադրում համայնքի ավագանուն:

## III ԹԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

7 Թիմը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով,
8 Թիմի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են եռամսյակը մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:

9 Թիմի նիստերն իրավազոր են թիմի անդամների առնվազն կեսից ավելի մասնակցության դեպքում:
10 Թիմի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է թիմի ղեկավարը:
11 Թիմն իր հրավիրված նիստերի ընթացքում իրավասու է ընդունելու որոշումներ:
12 Թիմի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայնով:
13 Թիմի որոշման վերաբերյալ թիմի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:
14 Թիմն ունի քարտուղար, որը արձանագրում է թիմի նիստերը և նախապատրաստում թիմի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

## IV ԹԻՄԻ ՂԵԿԱՎԱՐԸ

1) հրավիրում և վարում է թիմի նիստը: Իր բացակայության դեպքում թիմի ղեկավարի լիազորությունները իրականացնում է թիմի ղեկավարի տեղակալը.
2) ապահովում է թիմի բնականոն գործունեությունը.
3) թիմին է ներկայացնում նիստերի օրակարգերի նախագծերը.
4) համակարգում է թիմի աշխատանքը.

## V ԹԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

16. Թիմի անդամները՝
1) իրավունք ունեն.
ա. Թիմի քննարկմանը ներկայացնելու հարցեր,
բ. Ներկայացնելու թիմի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,
գ. Ծանոթանալու նիստերի արձանագրություններին,
2) պարտավոր են.
ա. մասնակցել թիմի աշխատանքներին, հրավիրված նիստերին,
բ. կատարել թիմի ընդունած որոշումները, ղեկավարի հանձնարարականները

## VI ԹԻՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Թիմի քարտուղարը
1) ապահովում է թիմի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը,
2) կազմակերպում է թիմի նիստերի գումարման նախապատրաստման աշխատանքները.
3) Ապահովում է նիստերի արձանագրության կազմումը.
4) ապահովում է թիմի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.
5) սահմանում է հսկողություն թիմի որոշումների իրականացման աշխատանքների մասին
6) թիմի ղեկավարին է ներկայացնում հաշվետվություն իրականացված աշխատանքների մասին.
7) կազմակերպում է հանրային առողջապահության վերաբերյալ ստացվող նյութերի հավաքում, մշակում և ներկայացում թիմի քննարկմանը.
9) թիմի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ:

## VII ԹԻՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

17. Թիմի գործունեությունը դադարում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 180-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.36454 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով՝ Արենի համայնքի ավագանու 14.07.2023 թվականի թիվ 67-Ա որոշումը, Արենի համայնքի մրցութային հանձնաժողովի 21.07.2023 թվականի թիվ 1 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.36454 հա (ծածկագիրը՝ 10-008-0178-0016, հողատեսքը՝ այլ հողատեսք) գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը 25 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնել մրցույթում հաղթող ճանաչված Վարդան Ջալալի Համբարձումյանին:

- Հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 22 784 ՀՀ դրամ,
- Տարեկան վարձավճարը սահմանել 6500 ՀՀ դրամ, որը կազմում է հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափի 4754.9%-ը: Պայմանագրի կնքման պահին 0.36454հա գյուղատնտեսական նշանակության հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 136.7 ՀՀ դրամ,
- Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 541.7 ՀՀ դրամ:
- Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:
- Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:
- Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 181-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 30-Ը ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 26 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ և 124-րդ կետերը և ՀՀ Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2091 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1.Արենի համայնքի ղեկավարի կողմից 30 հունիսի 2022 թվականին Արենի համայնքի Ելփին բնակավայրում «Դիդիվան» ջրաղբյուրի 4 կապտաժների կառուցման և արտաքին ցանցի մասնակի նորոգման համար տրամադրված թիվ 26 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել չորս ամիս ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 182-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 1.60703 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0295-, հողատեսքը՝ արոտավայր) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0.80054 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-004-0149-, հողատեսքը՝ այլ) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ